ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայ բառարանագրական բազմաթիվ ու բազմապիսի հուշարձանների մեջ իր բացառիկ տեղն ունի «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» անվանումը կրող բառարանը, որ հայագիտության մեջ սովորաբար կոչվում է պարզապես «Հայկազյան բառարան»: Հայ հին մատենագրության՝ իր ժամանակին հայտնի ձեռագիր ու տպագիր հուշարձանների լիակատար բառագանձն ամփոփող, իր դարաշրջանի համար գիտական ամենաբարձր մակարդակով կազմված բառարան է դա, որ ահա 140 տարի շարունակ եղել է հայագիտությամբ զբաղվողների ուղեցույցն ու ուսուցիչը՝ գրաբար լեզվի իմացության, հայոց լեզվի բառագիտական հետազոտությունների և, առհասարակ, հայագիտական ուսումնասիրությունների մարզում:

Ուղիղ կես դար է տևել «Հայկազյան բառարանի» կազմությունը. հիսուն տարիների ընթացքում բառարանի երեք հեղինակները՝ Գաբրիել Ավետիքյանը (1750—1827), Խաչատուր Սյուրմելյանը (1751—1827), Մկրտիչ Ավգերյանը (1762—1854) մեղվաջան աշխատանքով, Մխիթարյան միաբանության մատենադարանում եղած մոտ 1000 ձեռագիր հուշարձանների և հայ հին մատենագրության այն ժամանակ տպագրված մատյանների բառաքաղությամբ, հնագույն աղբյուրներից մինչև նոր ժամանակների գրշագրական տարբերակների համեմատությամբ ու բառաբննական ուսումնասիրություններով, կազմել են մի ընդարձակ բառարան, որ ինչպես ներածության («Նախադրունք») մեջ ասվում է, բաղկացած էր 12 ձեռագիր հատորներից: Բայց ինչ որ կարողացել էին անել հեղինակներն իրենց անդուլ աշխատանքով, չկարողացավ հրատարակել միաբանությունը, և ոչ էլ՝ հայ հասարակայնությունը: Ամբողջ ձեռագիր աշխատության հրատարակության ծախսերն այնքան մեծ էին, որ ստիպված եղան հիսուն տարվա ընթացքում հավաքած ու մշակած նյութը համառոտել և ամփոփել միայն երկու հատորում: Այդ երկհատորյակն է, ահա, որ հրատարակվեց 1836—1837 թվականներին և այսօր էլ մնում է որպես գրաբարի ընդարձակագույն և անփոխարինելի բառարան:

Բառարանի մեծ արժեքը ամենից առաջ պայմանավորված է բանասիրական, բառաբննական ու լեզվաբննական այն խոհեմաուտ աշխատանքով, որ կատարել են հեղինակները: Հայտնի է, որ հայ մատենագրության հնագույն ձեռագիր հուշարձաններում շատ ու շատ բառեր ունեն զանազան գրչություններ (գրային տարբերակներ), աղճատումներ, որոնց ճշգրտումները՝ մատենագրության տվյալների հիման վրա, առաջնահերթ խնդիր էր: Այդպիսի աշխատանք արդեն կատարել էր Մխիթար Սեբաստացին իր «Բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյա բառարանի առաջին հրատարակության (Վենետիկ, 1749): Սակայն հենց ինքը՝ Մխիթար Սեբաստացին առաջաբանում գտնում է, որ իր օգտագործած մատենագրական աղբյուրները բավական չեն գրաբարի լիակատար բառարան կազմելու համար, և հանձնարարում է իր հաջորդներին՝ հայտնաբերվող նոր աղբյուրների հիման վրա լրացնել իր գործը, նորանոր վկայություններով ճշգրտել այն ամենը, ինչ որ ինքը հնարավորություն չի ունեցել անելու, և դրանով իսկ ստեղծել գրաբարի ամբողջ բառապաշարը ճշգրտորեն արտացոլող բառարան: Բայց լոկ նոր աղբյուրների օգտագործումը դեռևս բավական չէր այդպիսի բառարան կազմելու համար: Դրա համար ամենից առաջ անհրաժեշտ էր լեզվաբննական հետազոտությամբ պարզել գրաբարի իսկական պատկերը ներկայացնող մատենագրական հուշարձանները և դրանք տարբերել հետին, «համակարծություններով» և օտարաբանություններով խրճողված լեզվով մատենագրական աղբյուրներից: Իսկ այդպիսի բնութագրության համար էլ անհրաժեշտ էր լեզվական բազմակողմանի հետազոտություն այն բոլոր աղբյուրների, որոնք օգտագործվում էին: Եվ ինչպես ցույց է տալիս այդ հետազոտությունների համառոտ ամփոփումը, որ զետեղված է «Նախադրունքի» մեջ, հեղինակներն իրոք կարողացել են լիովին կողմնորոշվել գրաբարալեզու մատենագրական աղբյուրների լեզվական բնութագրությունների մեջ, հիմնականում ճիշտ են գնահատել մեր հին մատենագրության հուշարձանների լեզուն, որ և բառարանի մեջ տեղ գտած բառերի ու նրանց տարբերակների (տարբեր գրչություններ, սխալագրություններ, հին և նոր ձևերի և այլնի) գնահատման հիմքն է հանդիսացել:

Բուն բառարանը բնդգրկում է գրաբարյան բառագանձը գրեթե լիովին, որ նանով որ դա հնարավոր էր իր ժամանակին: Բանն այն է, որ անցյալ դարի ընկրկրներին ներկայումս հայտնի շատ ձեռագրական

աղբյուրները դեռևս անծանոթ էին մնում, իսկ տպագրված աշխատություններում բազմաթիվ ու բազմազան աղավաղումներ կային, որոնք այն ժամանակ դեռ հնարավոր չէր ճշգրտել. միայն հետագայում լույս ընծայված այդ աշխատությունների գիտական հրատարակությունները կարող էին հիմք դառնալ այդպիսի ճշգրտումների համար: Եվ չնայած դրան, բառագիտական տեսակետից «Հայկազյան բառարանը» լիովին վստահելի աղբյուր է ու գիտականորեն հենություն է բոնել մոտ մեկուկես դարի ընթացքում, և այժմ էլ պահպանում է իր արժեքն այդ տեսակետից:

Բառարանի անուրանալի արժանիքն է բառերի իմաստաբանական և լեզվաբանական մշակումն ու բացատրական մասի մատչելիությունը: Ամեն մի բառի տարբեր իմաստային առումներն ու գործածությունները ստուգած ու ճշտած լինելով բազմաթիվ բնագրային վկայություններով, հեղինակները բացատրել են բառերն ամենայն ճշգրտությամբ և նշանակությունների հմտալից տարբերակումներով: Սա կայն բացատրական մասն առավել արժեքավորվում է նրանով, որ բառերի իմաստները ոչ միայն բացատրվում են հայերենով (գրաբարով), այլև բերվում են տվյալ բառի հունարեն, լատիներեն, բուրերեն, շատ հաճախ նաև պարսկերեն, արաբերեն, ինչպես և՝ ֆրանսերեն, ռուսերեն համանիշները: Սրանով «Հայկազյան բառարանը» ստանում է բազմալեզվյան բարգմանական բառարանի բնույթ, որ է՛լ ավելի է արժեքավորում այն:

Կարող է տարօրինակ թվալ, որ հայերեն բառերի դիմաց, որպես բացատրություն, բերվում են բուրերեն բառերը, և այդ էլ՝ այն հեղինակների բառարանում, որոնց նպատակն էր հայերենի իմացության բարձրացումը, գրաբարին տիրապետելուն գործնականորեն նպաստելը: Բայց դա միանգամայն հասկանալի է դառնում, երբ նկատի ենք ունենում իր դարաշրջանի իրադրությունը ընդհանրապես և լեզվական իրավիճակը՝ մասնավորապես: Պատմությունից հայտնի է, որ անցյալ դարի սկզբներին, ինչպես և դրանից առաջ, արևմտահայության որոշ մասի առօրյա խոսակցական լեզուն բուրերենն էր. բազմաթիվ հայեր չգիտեին, կամ շատ վատ գիտեին հայերենը, բատ որում խոսակցական հայերենն էլ խճողված էր բուրերեն բառերով: Այդ իրավիճակը խորապես գիտակցել էր դեռևս Մխիթար Սեբաստացին, որ իր առաջին՝ աշխարհաբարի հերականությունը գրել էր բուրերեն, որպեսզի բուրերենով հայերը սովորեն իրենց խոսակցական լեզուն ու ձեռք բերեն անհրաժեշտ հետակայական գիտելիքներ՝ դրանից հետո գրաբարին անցնելու համար: Իր բառարանում էլ նա բառերի մեծագույն մասի բացատրությունները օժտել է բուրերեն համանիշներով՝ դարձյալ նույն նկատառումներով: Այդ ավանդույթն էին շարունակում, ասես, «Հայկազյանի» հեղինակները, և ինչպես գիտենք, արդյունքը ավելի քան գոհացուցիչ էր: Եվ եթե այսօր արևմտահայ գրական լեզուն լիովին ազատվել է ոչ միայն բուրական փոխառություններից, այլև կենդանի է պահում գրաբարյան բազմաթիվ բնտիր բառեր, ապա դրա մեջ չենք կարող չտեսնել այս բառարանի վիթխարի դերը:

Բառարանում ամեն բառի դիմաց տրվում են հոլովական ձևերը և բայերի խոնարհումները, որոնք հավաստի են ու հիմնված են մատենագրական վկայությունների տվյալների վրա:

Վերջապես, բառարանը օժտված է մատենագրական բավականաչափ հարուստ վկայություններով, որոնք ունեն ոչ միայն լեզվաբանական, այլև բնդհանրապես հայագիտական կարևոր նշանակություն: «Հայկազյան բառարանի» վստահելի աղբյուր է բառերի գործածության մասին անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար: Իսկ սա այնպիսի մի իրազեկում է, որի համար, առանց «Հայկազյանի» տվյալների, հարկավոր կլիներ պրպտել մեր ամբողջ հին մատենագրությունը:

Արդեն գրեթե մեկուկես դար է, որ հրապարակի վրա է այս բառարանը, բազմաթիվ հայերեն բառարաններ են հրատարակվել այդ ժամանակաշրջանում. և նրանցից ոչ մեկը դեռ չի կազմվել առանց «Հայկազյանի» օգտագործման: Ավելին, չկա մի բառարան, որի հիմքում, ուղղակիորեն թե անուղղակիորեն, ընկած չլինի այս բառարանը: Այն ժամանակ, երբ լույս էր տեսնում «Հայկազյանը», հայերենը դեռևս իր վրա չէր գրավել պատմահամեմատական լեզվաբանության հիմնադիրների ու ներկայացուցիչների ուշադրությունը և դեռևս հայերենի. գիտական առաքարանությամբ զբաղվողներ չկային. «Հայկազյանի» հեղինակները կարողացան ստուգաբանել պարսկերենից, հունարենից, լատիներենից, եբրայերենից և այլ լեզուներից փոխառված բազմաթիվ բառեր, իսկ որ ավելի կարևոր է, նիշտ կերպով հայերենի մի շարք «բնիկ» բառեր համեմատել հունարեն, լատիներեն, պարսկերեն, սանսկրիտ և սլավոնական համապատասխանների հետ:

Հարադրվածը բավականաչափ պատկերացում է տալիս «Հայկազյան բառարանի», որպես հայ բառարանագրության խոշորագույն գանձերից մեկի, ինչպես և նրա՝ գործնական նշանակության մասին՝ հայագիտության համար: Այդ խոշոր նշանակությունը նկատի ունենալով է, ասես, որ Երևանի պետական համալսարանը վերահրատարակում է այն:

Պատճից վեր է, որ «Հայկազյան բառարանը» այս հրատարակությամբ դադարելով մատենագիտական հազվագյուտ արժեք լինելուց և դառնալով հայագետների ու հայերենով հետաքրքրվողների սեղանի գիրք՝ դեռ շատ ու շատ տարիներ կշարունակի իր անուրանալի դերը կատարել հայագիտության զարգացման մեջ:

ԼԻՐԱՊՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԴՈՐ

ԲԱՄՈՒՊԻՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

ՑԱՇԱԿԵՐՏՈՒԹԵՆՔ ՄԵԾԻՒ ՄԽԻԹԱՐԱՑ ԱԲԲԱՀՕՐ

Հ. ԳԱԲՐԻԵԼԻ ԱԻԵՏԻՔԵԱՆ, Հ. ԽԱՉԱՏՐՈՑ ՍԻՒՐՄԵԼԵԱՆ,

Հ. ՄԿՐՏՉԻ ԱԻԳԵՐԵԱՆ


ՏՊԱԳՐԵԱԼ ՑԱՐԱՁՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ ՍՈՒՔԻԱՍԱՑ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍՄՄԱԼԵԱՆ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱԲԲԱՑԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

ՀՏԱՏՈՐ ՎԱՌՎԱՀԻՆ

Ա—Կ



Ի ՎԱՆԱՆՑԻԿ

Ի ՏՊԱԲԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1836 ԹՎԻՆ

ԱՌ ԿՐԱՃԱՓԱՅԼ ԻՇԽԱՆԱ-

ՅԱԿՈՐ ՀԱԼԼԻՊԻ ՏԻՒՂ

ՄԽԻԹԱՐԵԱՆՍ ՈՒԽՏԻ

ՆԱՄԱԿ

Բարբառ վեճական մերոց նախահարց այս երկրագործ անգամ վերա-
կենցաղեալ՝ի լոյս, առ ո՞նախ հատուածէ զիւրն շնորհակալիս բոլորապատուճ
նուիրմանդ, եթէ ոչ առ Ինեզ, ո՛ ազգասիրաց մերոյ աշխարհիս ընտիր Վարա-
գլուխ, որ բազկաց վաստակելոց բազմամեայ տարժանմանդ՝ի տալին անվճար
կատարուածն գոյր հզօր կազդուրիչ՝ Ինչին հմտութեամբդ և կիրճ ճաշա-
կաւ, և երկասիրողացին քաջալեր դրուատոք անթերի վարձահատոյց։

Ապա՝ի քաղցր ժպիտ և յախորժ հաճութիւն մեծի Աշխանիդ
զուարճացի մատեանս, և այնպիսուա հանդիպեցայ շքեղ պայծառութեան,
որպէս զի եթէ և ոսկի առ ուսոք Թուեցայ չեւ անխառն զուեալ՝ի հնու-
թեանն ժանդոյ, սակայն՝ի դրշմած արդարակշիռ և ներոզամիտ Ինչին
պերճութեան՝ի տրտայս ձակատ՝ ըստ ձշգրիտ արժանեացն յարգեալ պա-
տուեցի։ և ոչ միայն վաստակաւորացն՝ի սոյն բերկրեալ զուարճացին
բազմաշխատ ոգիք, այլ և առ յապա երկերցն խրախուսեցին աշխոյժք՝ և
քան զևս արժանի Ինդիմ անմահական յիշատակի արձան զուա յօրինել։

ՆԱԽԱԲՈՒՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՍԷՓ ԷՄԻՆ ստուգապէս համատարած տիեզերածաւալ ընդ ուղիս երկրի՝ յարածուփ երեքաչեան, որպէս մարդկութիւնս ընդ արեգականմբ յամենայն ազգաց և՛ ի լեզուաց յոքնակոհակ կուտակեալ, ըստ ասացեալումն, Ջուրն՝ զոր տեսեր, ժողովուրդք են և բազմութիւնք և ազգք և լեզուք. սակայն ոչինչ ընդհատ է իմանալ զբարբառ նոցա՝ ի միաշուրթն լեզուէ Նախամարդոյն բաժանեալ ի բազում առաջս իբրև ի մասունս մասունս մայր ծովու, ովկիանոս ասեմ մեծի, ուրոյն սահմանօք պարագրական։

Յորոց սակի անշուշտ ընդ գլխաւորս՝ որ Մայր անուանեցան Լեզուք, զառաջինն ունի տեղի Հայկանս մեր բարբառ, որպէս մտերիմ և կարևոր ընտանութեամբ յառաջագայեալ ի լեզուէ մեծի նահապետին Նոյի յԱրարատեան աշխարհ մեր դադարելոյ աշխարհակեցոյց տապանաւն իւրով հանդերձ ցվախճան իւր։ Եւ այն իսկ է պատճառն անժխտելի, զի յամենայն գոգցես լեզուս ազգաց և ազանց սփիւռս տարածեալս յետ վաղափուլ աշտարակին մինչև ցօրս ցայս նշմարին հետք հայերէնաբարբառք։ Զոր և հարկ համարեցաք հետաքննել մասամբ ի զանազան բառս յընթացս գործոյս, լծորդս յորջորջելով իրերաց զըստ իմիք մերձաւորս հնչմամբ. մինչև յակամայից բերիլ մեզ ուրեք ուրեք և ի գնել զբառս այլոց ազգաց համեմատութեամբ մերոցս՝ առ ստուգագէտ իմացուած ոգոյն և նոցին։

Այլ եթէ գժոխերասան վկայեաց գիր զլեզու մարդկան խադնախօս և դիւրաասէ ի բարոյից կարգի, ոչ դիւրամոքելի գտանեմք և գյախուռն ընթացս նորին ի կարգաւոր բանից յօրինուածս՝ օրինօք ընտիր շարագրաց և քերթածոց։ Սմին իրի և առ ամիսոփել զամենայն զհանգամանս միոյ միոյ ի լեզուաց՝՝ի քերան մեծ մտին և մտանեն քաջ լեզուագէտք ի դարս դարս. այլ ոչ երբեք ձեռնհաս գտանին անվրէպ բովանդակել։ Քաջ խելամուտ լինին այսմ խուզարկուք բառարանաց իւրաքանչիւր լեզուի. զոր և վասն հայկականիս ի միտ առնու խորամիտ վերծանողն մեր. այլ սացուք և մեք գոյզն ինչ ձաշակս ի նախերգանի աստ ըստ առաջիկայ կարգիս։

Ա· ՅԻՇԱՑԱԿ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՆԱԽԿԻՆ ԲԱՌԱՐԱՆԻՆ ԱՑՆ Ի ՄԵԾՆ ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՑԿԱՑՐ։

(1) Առաջին իրաւամբք՝ ի նախերգանիս ունիցի տեղի՝ դովասրժանաւոր՝ առաջին մեծ բառարանի հայկազեան լեզուիս յօրինելոյ Մխիթարայ Աբբահօրէ մերմէ Սեբաստացւոյ՝ դրոշակութիւն ոմանց ոմանց՝ ի ձեռաւսուն և՝ ի բանիբուն աշակերտաց իւրոց· յորս բազմավաստակ ճգնող հանդիսացաւ յառաջ հասանիւրոց· յորս բազմավաստակ ճգնող Անդրէաս Մկրտիչ վարդապետն Անանեան կոստանդինուպօլսեցի՝ Արժան է առաւօտ նշանակել զձեռնարկ յառաջաբանի անդ մեծի այնր երկասիրութեան նախահօր մերոյ «Թէ զինչ է կազմել զբառգիրք՝ ոչ ոք գիտէ, բայց միայն նա՝ որ յօրինէ և կազմել զբառգիրք՝ ոչ ոք գիտէ, բայց միայն նա՝ որ յօրինել իցէ երբէք զնոյն։ Եւ այս՝ ևս քան զևս ծանրանայ մարդոյ, եթէ ոչ ունիցի առընթեր զբառարանս ինչ, կամ ոչ ոք իցէ յառաջաւոլ քան զնա՝ ի յօրինել զնոյն ըստ կարգի, այլ ինքնին՝ ի բնութեան դիտուստ նորոգ կազմիցէ· որպէս մեզ յայսմ աշխատասիրութեանս դիպեցաւ։ ... Սկսեալ յամի տեառն 1727, հասեալ՝ ի տառն Ե, և՝ ի պակաս ... Սկսեալ յամի տեառն 1727, հասեալ՝ ի տառն Ե, և՝ ի դիպիլն մեր մեծամեծ զբաղանաց՝ խափանեցաք մինչև ցամն 1742· և ապա վերստին բուռն հարեալ՝ հասուցաք յառաջ գործակցութիւն աշակերտաց մերոց, յամի տեառն 1745»։ Եւ ահա յե— —ղոլ կ մեռ՝ ի կատարումն տպագրութեանն՝ զկնի պատրաստելոյ և զնիւթ յառաջաբանութեանն՝ եհաս՝ ի վերայ երջանիկ փոխումն նորա յաշխարհաքանութեանն՝ եհաս՝ ի վերայ երջանիկ փոխումն նորա յաշխարհս հեգ յամի տեառն 1749· յասպր· 27։ Ցիշատակ արդարոյն օրհնութիւն։

Ապա ուրեմն գլուխ գովութեանն այդր պանծալի գործոյ մեծի այն է, զի և առաջին էր՝ ի Թուղտմեան ասն, և կատարեալ յիւրում ժամանակի, ճոխութիւն բառից ըստ տանելոյ ժամանակին, անվթար մեկնութիւն, կարգաւորութիւն և յատակ ոճով, և յայտարարութիւն տեղեաց հին մատենագրաց առ ձեռն եկելոց· և պարզաբար՝ այնպիսի հանգամանք, որ զուգահաւասար գտաւ եւրոպեան ընտիր բառարանաց ցայն վայր երևելոց, և իւիք իւիք յաղթօղ՝ քան թէ յաղթեալ։

Ցետ հանգիստանալոյ այսր գործոյ՝ որ էր հատոր առաջին, և կոչէր Մեծ կամ Գրաբառ Բառգիրք՝ որպէս տիրապէս աշխատասիրեալ մեծին Մխիթարայ, ապա ըստ խոստանալոյ նորա և ըստ յանձնելոյ աշակերտաց իւրոց վաստակակից եղելոց՝ ի լոյս ածաւ և՝ ի տպագրութեան հայրն երկրորդ, սկսեալ առ կենդանութիւն Ցեառն Մխիթարայ, և հետզհետէ յառաջ խաղացեալ յաւուրս արժանաժառանգ յաջորդի նորա Սահմանոսի Աբրայր Մելգոնեան։ Աւարտ յերկրորդ հատորի անդ՝ Մնացորդաց բառգիրքն է առաւել երկայնութիւն Հ· Սիմոն վարդապետի կոստանդինուպօլսեցւոյ· իսկ Ցաւելուած անուանցն կրկին, մին Ածաչնչի՝ երկ Հ· Զաքարիայ վարդապետի ակնեցւոյ, և միւսն՝ Ստացին պատմութեանց՝ քիւրեան Հ· Իգնատիոս վարդապետի խաչատրեան կոստանդինուպօլսեցւոյ։ Նոցին է գործ միաբան այլովք գործակցովք և՝ ի Գրաբառն յաշխարհս բառն· իսկ յԱշխարհաբառն՝ ի պրաբառն՝ գործ տարժանելի և ճոխ՝ է առաւել աշխատասիրութիւն նախանշանակեալ Հ· Մկրտչի Անանեան· որում՝ ի պատանեկութեան ձեռնաւու գտաւ և Հ· Սահփան Ալիկեան՝ զմիւռնեցի, քաջն՝ ի բազմալեզու հմտութեան· Զբոլոր վանդակ ձերկրորդ հատորին ևս գլխով ընդ առաջնոյն լիով ծանեաւ ոգին ողջոյն, և օր քան զօր զարգացաւ՝ ի հարազատ հայկաբանութեան, և յաղթի ոգի մահացութենիս, որոց նախաշաւիղ առաջնորդ է բառգիրքն։

Բ· ՑՕՐԻՆՈՒԱԾ ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆԻՆ

Ոչ անյայտ, այլ յայտնի մարդասիրութիւն նշանակեալ էր՝ ի յառաջաբանի նախկին բառարանին՝ կազմութեի երկրորդիս այս այսպէս· «Եթէ տեառն կամք լցեն, զկնի հատանելոյ և այլոց բազմաց մահուընէ հայկազանց՝ ընծայեսցի քեզ այլ բառարան ինչ առաւել ճոխ, և ընդհանրական, և բազմալեզուս։ Դիւրաւ և ոչ զակի գուշակէին վասն հարքն մեր ընդ հօրն հատարակաց· զի՝ ի միոյ կողմանէ հաւատոյ համարէին՝ թէ ոչ յիսս բազում ամաց ապառն ազգն ծարաւեալ զթիւս տպագրութեան առաջնոյն, և՝ ի միւս կողմանէ տեսանէին՝ ի փորձոյ, զի ամ ըստ ամէ՝ ի վեր երևին հին մատեանք ազգիս յանկարծելի վայրաց· յորոց ելանեն նորանոր բառք և ոչք նախնեաց արժանիք նորոգ յաւելուածով պերճ և պանծալի ընծայիլոյ զազգային բառագիրս։ Նովին յուսով և մեք դեղեցիկ յանդգնութիւն գուշակեմք վասն միոյց աշակերտաց և աշակերտացն նոցունց, թէ՝ և նոքա այլ բառարան յօրինեսցին ըստ ժամանակին տեսումբ՝ ևս ճոխագոյն և կատարելագոյն՝ մանաւանդ զաշխատասիրողս առաջնոյս նոր բառարանիս յանուանէ նշանակել։

Ըստ անդուլ խրախուսանաց երիցունց անընդհատ յաջորդաց ազգիս մերոյ մեծին Մխիթարայ, Սահփանոսի ասեմ Մելգոնեան, Սահփանոսի Ագոնց, և Սուքիասայ Սոմալեան, բուռն հարին Աստուածով՝ ի յառաջատուութիւն նոր բառարանիս՝ երիքին անխոնջ երկաթսիրօղք, Հ· Գաբրիէլ վարդապետ Աւետիքեան կոստանդինուպօլսեցի, Հ· Խաչատուր վարդապետ Սիւրմելեան կոստանդինուպօլսեցի, և Հ· Մկրտիչ վարդապետ Աւգերեան անկիւրացի, սկիզբն արարեալ յամի տեառն 1784, և աւարտակիտեալ՝ ի 1834· յորում ամբողջ յոբելինի յիսնամեան ժամանակի, մերթ ընդ մերթ ընդհատութիւք յերեսաց այլևայլ կարևոր գործոց դրատրոց և բանեղինաց, ևս և բազմավրդով յիղափոխութեանց գարէ՝ ի գար ընդ ամենայն տիեզերս· որով և գործս զգեցաւ զբազմօրինակ կերպարանափոխութիւն։

Ցերկարէր գործն՝ ի սկզբան անդ՝ առ՝ ի կարօղ լինելոյ վերծանել և քաղել զբառս կարևորս՝ ի նորագիւտ մատենից· և զի՝ ի սկզբան անդ լոկ զանուանս և զտեղիս մատենագրաց կամք էին նշանագրել ըստ ոճոյ նախկին բառարանին, ապա՝ ի յորդորելոյ բանասիրաց ընկերաց և արտաքոյ՝ լաւ ևս դատեալ եղև վերագիր առնել յաշխատութիւն զբուն իսկ վկայութիւնս նախնեաց փոխանակ առ՝ ի ստեղծ, անկան որպէս թէ զձանապարհային, և օրհասին՝ ի վերայ ոտից, և ընդ ամենայն ինչ ի ձեռն ունելոյ զանազան ձեռագրաց՝ ի տեղիս ուր գտանէին։ Եւ ահա յիսս այնորիկ գոյին հասանէին՝ ի ձեռս մեր այլ մատեանք՝ գանձարանք լեզուիս հայոց անակնկալելիք· որպէս Քրոնիկոն Եւսեբի՝ յիսս եկեղեցական պատմութեան, Փիլոն Երրայեցի, Դիոնեսիոս արիսպագացի ըստ վաղեմի Թարգմանութեի՝ յորմէ կազմակերպեալ էր նորն, և մանաւանդ ոսկեմատեանք Յովհաննու Ոսկեբերանի՝ ի մեկնութիւն Մատթէի, և յորդորակք նորա՝ ի Թուղթն պօղոսի՝ հարազատ երկք սքեղ Թարգմանչաց մերոց· և բնագիր Հառք Հ· Մանդակունւոյ, Հ· իմաստասիրի, Հ· Սարկաւագ վարդապետի· որպէս և Ղևոնդ երէց, Թովմա արծրունի, այլովքն հանդերձ։ Թուղթ յաւելեան զանազան օրինակք գրոց նոյն մատենագրաց արդէն ստացեալոց· զորս ըստ կարի պէտք եղին բազդատել առ՝ ի գիւտ ըստուգագոյն ընթերցուածոյ· և ապա սփռել զայն ամենայն Ճոխութիւն՝ ի վերայ նախատատրաստեալ գործոյն· մինչև տիրապէս համարել ասել՝ թէ արդ չատ է, բուռն հարցուք՝ ի տպագրութի· զի եղեալ էր դրչագիր օրինակ մեր երկոտասան հատոր երևելի, ոյր կիսոյ չափ գոգցեաս ունէր լինել տիպն՝ ի հինգ կամ վեց հատորս՝ ի ձև առաջնոյն· Բայց ո՞ կարէր ծախս առնել այսպիսւոմ գործոյ· զի թէպեան ոմանք՝ ի թաւերարաց ազգայնոց յօժարէին ձեռն տալ մասին, բայց բոլորն ուժով խլեալ և ոչ ոք· Ապա այս խորհուրդ յաղթէր առ ժամն· կարձեալ զվկայութիւնս՝ գրեան թէ առ հասարակ, կամ ծայրագլուխ աներ նշանակել, թօթափել զբազմալեզու կառարկութենէ, և անդրէն միւսանգամ գրել զոն պահել նախկին բառարանին· Եւ յայս ևս փորձ միանգան աշխատասէրք ոչ սակաւ ժամանակ՝ իրրև՝ ի նոր ձուլումն գործոյն, բայց լքեալ սրտիւ, զի ամենայն աշխատութեի իւրեանց յերկիր անկանէր, և ոչինչ երևելի բարեվաստանք լինէին նախկին բառարանի· Եւ ահա յիսս անսիրտ ուղևորութենս նորոյ՝ ի խոր ծերութենէ ևս հասեալ երկուց յաշխատողաց, անկան որպէս թէ զձանապարհային, և օրհասին՝ ի վերայ

հասեալ՝ երկոքին ևս զուարճանամենիւք անցեալ՝ փոխեցան առ աճ ։

Ի լինել այսմ այսպէս՝ նորանոր քաջալերեալ ի վերայ յորդէին երբորդիս , որ զեօթանանամենիւք ուրախ էր , յայլ և յառաջնորդէն և ի համօրէն միաբանից զօրանալ և պահակել զդործն անդադար ինդրեալ ի բովանդակ ազգէս , զիարդ և ից՛ե օրինակաւ ընդ միջին իւն շաւիղ ուղղութեամբ երկայնութեանե և համառօտութեանե գործոյն ։ Եւ այսպէս յիտ կրկին և երեքկին փոխելոյ՝ կարկատելոյ՝ և նորոդելոյ զդործն , որպէս ընդ համատարած ծով վերատին նաւարկելով եկ ի դլուխ երկասիրութեանն յիանաւորն , և սկիզբն եղև տպադրութ՛ հանդերձ երեքեքին գուշ և դադար առնելով . զի ծանր էին ծախիքն՝ ոչինչ ընդհատ յաշխատութենէ ։

Ցընթացս այսր յոբելինի նախ քան զվերջին լրումն գործոյս՝ քաղեաց ի ամենէ զնւբ յոքնաւաստակ աշխատութենէ չ . Մանուէլ վարդապետեան մեր Ջախջախեան . այն է լնակատար բառարանն ի հայէ յիտալական ։ Ա յսոքիկ այսքան ։

Գ . ՀԱՆԳԱՄԱՆՔ ԳՈՐԾՈՅՍ

Նազմապատիկ բանից մեզ պէտք էին ի խնդամուտ առնել զեմսոսն ընթերցասէրս նոր բառարանիս , թէ առ ի մի՞ զայս ինչ այսպէս , և զայն ինչ այնպէս կարդեալ իցէ մեր յընթացս ոլջոյն . այլ քանզի ընդհանրական բանք կարևորք ճոխաբար ծանուցեալ կան ի յառաջաբանի առաջին բառագրոց , որք ի դէպ գան և երկրորդիս , չերկարեմք ասս զբանս մեր . Թո՛ղ զի բանասէրքդ հայելով նեթ ի դործն ինքնին իմաստասիրեն բազում ինչ՝ զոր մեք ոչ նէաք ասել : Ա յլ զի մի՛ անպատճառ տարտամութենք խորհրդոց և յոյզք խնդրոց լինիցին առ սիրելի վերծանողս մեր , քանի մի կարևոր տեղեկութենս յիշեցուցանել կամ եղև մեզ , զի հատցուք զպատճառս բանախնդրաց ։

Նպատակ առաջի եդեալ է գործոյս՝ բովանդակել ի ծոց իւր ըստ կարելւոյն մեզ ծանուցեալ գիտութենի հայկազեան լեզուիս՝ եթէ՛ նիւթապէս , և եթէ տեսականապէս , այսինքն ըստ տառից , ըստ փաստութենց , ըստ բառից , և ըստ իմաստից : Ըստ տառից և ըստ վանկից միշտ նշանակեմք , եթէ կայցէ խառը ինչ նշանաւոր ընդ հին և ընդ նոր դրչութենի . սե՛ս առաւելապէս ի տառսն Բ , Գ , Դ , Զ , առընթերս տառիցս Մ , Ն , ևն . որպէս և Ւ , Ո , Օ . տե՛ս և ի սկիզբն իւրաքանչիւր գրոյ ։

Ա՛ռաւել յամենայն ի բառս տեսանես զգուշմունս ըստ սկզբան գրչութենէ , կամ հոլովման , կամ լծորդութենէ , ևն , թէ և այլազգ գտանիցես՝ քան զոր գուդ գիտեիր , կամ ընթերցեալ էր քո յայլ և այլ տպագիրս և ի ձեռագիրս . զի կանոն լեզուի է միաբան վկայութենի նախնեաց , և ոչ այլափոխ կարծիք յետնոց , կամ խանդարումն և սխալագրութենի , որ ակամայ՝ և որ կամաւոր ։

Եւ՛ս առաւել իմաստ կամ նշանակուն բառից ճշդեցաւ ի մէնջ ամենայն զգուշութե՛ ըստ համեմատութեան հարազատ ոճոյ նախնեաց , և ընտիր ընտիր հին թարգմանութենց նոցա : Քանզի ոչ սակաւ բառք ի յետին դարս յայլ միտս առեալ լինէին . և մեր իսկ դլխովին յայլևայլ գիրս մեր զնոյն բառ ըստ յետնոց էր ի կիր արկեալ . այլ ոչինչ ամօթ համարեցաք նախ ուսանել զուղիղն , և ապա այլոց ուսուցանել յայս գործ . վասն զի իրաւամբք յաղթեաց և յաղթեսցէ յայսմհետէ և անդր կանոն առաջնոց ։

Ի հաստատութենի իրացս ոչ յաւելորդս յաշախեմք զվկայութենս , և զհամեմատութենի յունական բառից ըստ հմտութենե նախնեաց մերոց , և անաչառ ծանուցանեմք զսխալանս հին դրչաց անգամ : Զայս քաջ իմաստասիրէ՝ որ միանգամ ի կշիռ դնէ բազդատութ զհայկական մատեանս սկսեալ ընդ միմեանս , զդրչագիրս հին և նոր , զտպագիրս և զձեռագիրս , որպէս և զայլ ամենայն գիրս թարգմանեալս ընդ վաւերական բնագիրս : Մինչև զայն ևս աչօք բացօք առնել , զոր ամենայն բառագիտունք լինին խոստովան , թէ ոչ ոք քաջ չիկ իմանայ զնոսկութենի բնիկ լեզուի նորոյ , եթէ չնայե խնդամուտ՝ զկնի փոքր ի շատէ և այլոց լեզուաց , մանաւանդ առինչունակ եբրեւելոց , որպիսի են ի պէտս մեր պարսկականն և մարն՝ սահմանակից յարևելից կողմանէ , ասորիք այլովքն հանդերձ ի հարաւոյ կուսէ . և առաւել յունականն յարևմտից կողմանէ . յոր քաջկիրթ նախնիք մեր՝ ի փոխ առին անուն զազգի ազգի ոճս բանից և բազադրութեան բառից կամաւ և ի հարկէ . այլ և ոմանք խոպան հելլենացան յիմաստասիրական ձայնս, զորս այլք վոյիլական հայ կաբանութե՛ յերիւրեցին : Եւ ի սե՛ գիրս անդամ , ուր գեղեցիկ պահի լեզու հայկազեան քաղցր և համեղ , հանդիպին ուրեք ուրեք աշնպիսի բառք և ձևք բանից , զորս այլազգ լմնցան հայերէն ևէթ վիրծանօղք՝ թէև կարի իմաստուն՝ առանց համեմատութեն եբրայական և յոյն բնագրին , կամ թարգմանութենե եօթանասնից : Զամենայնի զօրինակս նշմարեա ի կարգի խուռն և հոծ վկայութենց բառարանիս նորոյ . ուրով ուղղագրի և լինչ լինչ ակամայ վրիպակ հնոյն ։

Բազմաբարբառ է մասամբ իմն՝ բառգիրք մեր այս. ոչ առ ի չեղջակուտելոյ անխտիր զձայնս զանազան լեզուաց հանդէպ իւրաքանչիւր բառի , այլ առ ի տալ ըստ տեղւոյն զիմաստս հայկական բառից ան վրէպ՝ ըստ հետոց հնութենան . վասն որոյ բաց յարևելեան դիւրահաս բառից՝ յիշեցաք ասէպ և զպարսկականս , զարաբականս , զեբրայականս , ևն . և ս առաւել յաշախեցաք զյունականս՝ համեմատութե՛ լատինականի . ոչ բաս յետնոցն ոճոյ , այլ ընտ վեղմի թարգմանութենե նախնեաց մերոց , ցորչափ կարևոր դատեալ եղև , զի ուսցին և յետինք թարգման լինել հարազատ հայկաբանութեամբ ։

Զանազանութենն պէսպիս նշանակութենց և իմաստից մի և նոյն բառի՝ կրկնակի նշանակեցաւ ի մէնջ . մի ի նոր տողէ սկսանելով զայս և զայն առումն՝ մանաւանդ յորժամ տիրապէս որոշեալ բառից յունաց ի դէպ պայմն ըստ թարգմանութենանց առաջնոց : Եւ միւս ևս՝ ի նախկին ընդարձակ նշանակութենն դնելով և զզանազանութենն բացատրութենց նշանակեալ գլխատառիւք . ուր է զի նոյնպէս մի բառ էր և այլոց ազգաց ընդարձակ առմամբ , որպէս ի մեզ . և կամ այլևայլ բառք էին առ այլս , բայց որպէս փաղանութ՛ ոլք ի նայն իմաստս հայէին : Աւելի քան զայս ճապաղել զբացատրութենս պատճառ լինէր կրկին և երեքկին մեծութենե բառարանիս . զոր չտանէր ժամանակս ։

Պէսպիսութենի հնագիր մատենից գլխովին , Թո՛ղ զնուագիրս (յորս ոմանք զուգակշռին ընդ հնագոյնս վաւերական օրինակօք իւրեանց) , և կասկած մեր ի վերայ ոգէս՝ մանաւանդ Թէ գիտնական հարցեալ գրչաց լմնատակաց , հանդերձ զանազանութե՛ հին և նոր տպագրութենց՝ որ յայլոց , և որ ի մէնջ , ոչինչ զմեզ զարմացոյց . բայց աշխատութենի յոյժ հասոյց , քանզի անդադրանելի է պէսպիսութենի սխալագիր գրչաց . մինչև յանհնարս մատանել ամենայն իմաստուն մտաց , Թէ զնրն ընտրեսցէ . միայն ի գլխաւոր գիրս միշտ ի կիր արկեալս գիւրին է ընտրել զսովորական ընթերցուածս . զոր օրինակ է սե՛ գիրքն , շալականն ևն , որպէս և ի գրեալս ի հին և յարեւմուն գրչաց : Վասն որոյ իրաւամբք պատուիրեն Ընորհալին ի նախերգանս Հաւատով խոստովանիմին . «Ախմալքն ի գիրս՝ ուղիղ գիտողացն տացեն գրել , զի ուղղորդ լինիցի » ։

Նախկին դիտումն մեր այն էր , զի զընտիր բառս ևեթ յ ոգեացուք ի մի մատին գործոյս , զեօրէթան և զօտարոտի գտանելս հաւաքելով ուրոյն իբրև ի մնացորդս : Բայց յետոյ հարկեցաք ի խնդրոյ այլոց զամենայն բառ գտեալ յոր և է մատեան՝ պատուաստել ի կարգիս . միայն այնմ ուշ կալաք , զի մի՛ դիցի բառ ինչ առանց վկայուէ կա՛մ առանց նշանակելոյ զմատենագիրն . զի սովիմբ ինքնին կշռի յորգ միոյ միոյ ի բառից անտի ի յարգուէ կամ յանարգուէ մատենին , ի հնութէ և ի նորութէ . զորմէ ճոխագոյն լիցի ի մեծոյ բան ի կարգի մատենից՝ մատենագրօքն հանդերձ : Ապա ուրեմն ոչ ամենայն բառ եդեալ ի մէնջ ի բառարանիս ունի զտեղի ի կիր արկանելոյ ուժ և իցէ յոր և է բանս , այլ ուզպի ի նպատակ իմանալոյ ևեթ : Ա յս էր և ասելն Հ . Մկրտչի Ակնանեան յոտանաւորն որ յաւարտ յառաջաբանի երկրորդ հատորին . «Ինչ ինչ գլխի վասըն կարգի , այլ ինչ գլխի՝ զի է յարգի »։

Դուն գործեցար և ի բացատրութիւն մեր չվարել զբառս յեռին դարուց, այլ անմարթ էր զամենայն ինչ այսպէս խարխլ. զի իւրաքանչիւր գործ հարկաւորին յուսումնական կարգի ջնջեա երթալ դպրոցական ոճոյ. վասն որոյ լաւ համարեցայք վարել զառ մեզ ստուգաբանական ձոյնս յակամայ կամս. որպիսի են Ածական (ըստ նախնեաց Մակադրական կամ մակդիր՝ իմա ոճով յունաց), և Գոյական (իբր գոյացական, որ առ նախնիս՝ իսկ ասի). որպէս և Զայնական կրական կամ կրաւորաձայն (վասն չէզոքական բայից յանգելոց ի իմ), ևն. զի զայսպիսիս հարկ ժամանակին անմեղադիր առնէ։

Ոչ կարացաք, և ոչ իսկ կամեցաք հնոտիօք լինել սուղորէն ոմանց ոմանց ի գրչաց, որք կարճեն զառաջ ինչ կամ ղվանկ, երբ կրկնեալ իցէ ի կարգի բանին, անչուշտ տալով իմանալ ընթերցողաց՝ թէ երկարեա կամ կրկնեա անգ զձայնն. զոր օրինակ գրեն, *Դնի նոր գնրեզմանի։ Մատուցանեմ քեզ։ Անկանդ։ Ցուցէ, կեցէք։ Հովուեի, թեթուեի ևն. որք վերծանելի են, *Դնի ի նոր գերեզմանի. մատուցանեմք քեզ. անկան անդ. ցուցցե, կեցցէք. հովուուլի, թեթուուլի, ևն։ Զայսպիսիս ըստ սեզոյն ծանուցաք յընթացս գործոյս, կամ փակագծիւ յստէպ զպակասեալ տառն. ապա եթէ առաջիկայ բանն չէհայէր յայն բառ, զսովորական հընչումն եգաք։ Զայլ սեղեկութիւնս կարևորս պահեմք նշանակել ի կարգի ի սրաքանչիւր բառից։

Դ. ՀԱՆՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԲՈՒՒՆ ՀԱՑԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Որ միանգամ չիցէ քաջվարժ ի հարազատ բարբառ գրաւորելոյ մերոյ, և անխորհուրդ յորդ ընծայեսցէ ամենայն բառից ծովացելոց ի բառարանիս, այնպիսին անձամբ զանձն խորասոյզ առնէ յանդունդս յայս. ուսանել ուսանի ինչ ոչ, և մոլորի ի շաւիղս յետին ոգիտութեանէ. վասն որոյ սակս յուշ արարաք յընթացս բառ արանիս, թէ այս բառ է անյայտ կամ անստոյգ. այս ինչ բաղադրութեան կամ բարդութեան է պիտակ. այն ոճ է եբրայական, այս հելլենական, միւն լատինական ևն։ Արդ առ ընդհանուր հմտութեան ուսումնասիրաց կանխեմք յուշ առնել յայսմ վայրի զքանի մի օրինակս։

Եբրայական ձևք բանից՝ ճարտար իմաստութիւն սքից Թարգմանչաց մերոց այնպէս են յեղեալ ի հայ բարբառ, որպէս այն թէ հայերէնաբարբառ իցէ նախամարգարէն մովսէս, համարձակախօսն եւասայի, այլովքն հանգերձ։ Եւ եթէ դուն ուրեք պահեալ իցեն և բուն եբրայական բառք կամ ոճք, զայդ այդպէս տեսեալ մերոցն և յհօթանասնից Թարգմանութեանն յունական, խորհրդով Թողեալ է նոցա այնպէս։ Քանզի զի և ինչ ինչ է հեւևողութեանն այլոց ընթերցուածոց, կամ ինացուած է կանխագոյն Թարգմանութեանն յատուկ օրինակէ. ուր Թողից զայն՝ զի ի գիրս սուղմանի պէսպէս են և հայերէն ընթերցուածք ըստ պէսպիսութեանն յունին և ասորւոյն։

Հայացեալ համարին և յոլով ոճք յունականք, զորս սովորութեանն քաղցրացոյց, չասեմ թէ ոմանց հաճոյ Թուեցաւ խրթնաբարբառութիւն հելլենասանել, քան ըստ յատկութեանէ հարազատ լեզուիս սղոլախօս լինել. այլ է թէ ի պէտս մտին քերթուածոց ինչ ինչ պատկանացի ըստ տեղւոյն։ Զոր օրինակ. օտար է ի բուն հայկաբանութենէ՝ ասել, վասն ուղէ, վասն գնալ, փոխանակ ասել ևն. զի առ յոյնս չիք դէպքայ, կամ հոլովականն աներևոյթ բայն. վասն որոյ հարկաւ այսպէս ջարդարեն՝ հոլովական յօդիւ հանգերձ. իսկ հայկական ուղղախօսութենէ է, վասն ուղէ, փոխանակ ասելոյ ևն։

Ոճ է և յն. λο. Դուլ ընա, Լինել վիս, Որպես զի լինէր, Որպես ոչ ասէր ևն. իսկ հայերէնախօսն ասէ, Դուն մ, Լինել ինչ. Որպես զի լինիցի, Որպես ոչ ասիցէ ևն։

Կրկին հայցականն և՝ ոճ չն. և λο. գուն ուրեք վարեալ. զոր օրինակ. Ասաց ընա զնմա զիմաստութիւն. Դու զի առնէս պտէղ. ևն. փոխանակ ասելոյ՝ Ասաց նմա զիմաստութիւն. Դու որպիսի ոք առնէս պտէղ, կամ՝ ոչ հաճարէս զանձն ոք ևն։

Զէ պարտ յամաչել և պլուռնական ընդունելութեան կամ ըզբերեալս առանց նախադրութեան. զոր օրինակ, Ասացին ցերեսս էէլոյ կամ էէլոյ կամ լինելոյ. որ ըստ հայումս ասի, Ցէս ցառիւն, Իբրև ցայս ցառեալ էէլ ևն։ կամ Դրանդն ֆալելոյ, վիճն ֆոխելոյ. որ ըստ լս. և հյ. ասի, Դրօճն ֆալելովս. վիմէն ֆոխելով. ևն։ կամ՝ իսկ նոցա խլացեալոց և կուրացեալոց ի ճշմարտութենէն՝ նախանձելն. Ապա. այսինքն խլացեալ և կուրացեալ։ Զայլ ևս խոհս գտցես լիագոյն զննեալ յընթացս գործոյս։

Ե. ԽՏՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԻՑ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ. ՑՈՐՈՑ ՔԱՂԵՑԱՆ ԲԱՒԻՔ ԲԱՒԱՐԱՆԻՍ

Լայս են սիրապէս մարմին և հոգի ամենայն բառագրոց, վասն որոյ ամենայն մատենագրութիւնք, սնդին աւանդք նախնեաց, գանձարանք հարազատ լեզուաիւսութենէ ի դարս դարս. սմին իրի ամենայն փոյթ մեր և ընթերցասիրաց մերոց ունի ի մատեանս ապատան լինել և ի մատենագիրս ազգիս, և յաղթօղ լինել մտաց բոլորից լաւութեի մատնին և մատենագրին։ Ազգասիրն մատեանք. այսինքն գլուխք գրեանք, զորս ուսումնասիրէն Հեռագիրս անուանեմք, է որ մագաղաթեայ, և է որ թղթեայ, իմա անխտիր՝ երկաթագիր, բոլորագիր, նօտրագիր, ընդ մեծ և ընդ փոքր՝ ընդ հին և ընդ նոր՝ ոչ պակաս քան զհազար հաշուին ի գրատուն մերում. և զի ոմանց ի նոցանէ են կրկին և երեքկին օրինակք, վասն որոյ սակաւաթիւ են յոյժ մատենագիրք քան զմատեանս. այսինքն այնչափ՝ որչափ գտանես յանուանէ ի կարգիս։ Թուոյ զօրինակս ապագրեալս յայլևայլ տեղիս և առ մեզ։

Նպատուիթ մատենին ձանաչի ի հնութենէ և յանախակալ դիպուածէ և ի հաւաստարմութենէ գրչաց. զորոց զընտրութիւն առնել նոցա է անկ, որ ի գիրս Թարգմանչին միշտ։ Իսկ լաւութեի մատենագրին յառաջիկայս նկատի ի մէնջ ըստ ոճոյ հնութենէ և ըստ գեղեցիկ հայկաբանութենէ. ապա Թէ ոչ՝ մարթի և ոչ ոք անմահն լինել ի կարևոր լեզուագիտութենէ, և անդարթ չարագրածս առնել. Թող զի կան և սքիք անգէտք գործութենէ, և գրագէտք աննորք։

Զայս յայն սակս նշանակեմք՝ Թէպէտև զինքնին յայտնին մտաւորաց, զի գոնէին միամիտք և սխմարիք՝ որք զամենայն գիրս միօրինակ լաւ վարկանին. և զոր և է մատենագիր՝ իմաստուն, և որ առգնեն։ Իսկ լաւութիւն բառարանիս կախեալ է զհաւաքմանէ հարաջոտ բառից և բանից ըստ բուն հայկաբանութենէ յերիւրից. այլ Թէ մատենագիրն գովելի կամ պարսաւելի ոք իցէ, զայն ինչ ոչ հոգայ առ ժամս։ Այլ զդով և զպարսաւ ոճոյ և ոգւոյ առն առն իմացիս ի գրուածոց միոյ միոյ ի նոցանէ։ Ապա կարի իմաստութիւ գրեաց հանճարեալ մեկնիչն եսայեայ Գէորգ վարդապետ՝ ի վերայ բնաբանիս. *Եւ զհանճարեղ ունկնդիր. Ընդրկք են, ասէ, և այս՝ հոգևորք և ճշմարտութիւք. զի որ ունի զընտրութեի հոգւոյ, կարէ լմանալ՝ ո՞ ոք հոգւով ոչ խօսի, և ո՞ քեհղեքբուղաւ. զի յոլով բանք են վարդապետաց բազմաց, որ զբարւոյ ունին զդէմս. այլ անհանճարք և առանց քննութեե յատիշտակին, և չատ մնասին. իսկ իմաստուն լսողն իբրև հմուտ տեղանաւուր զօգտակարն ընդունի, և զանօգուտն խոտէ իբրև զպիղծ դահեկան. լսելով պօղոսի, Թէ զաննշանացն փոյձ եղիցէք, և զբարին ընկալարուք. և ի չարաց ի բաց կացէք։

Ուստի ունի ամենայն ոք ի միտ առնուլ, Թէ որպէս ի բանս հաւատոյ և վարուց ընտրել պարտ է ընդ մատենագիր ոչխամիտ և ընդ մոլար, նոյնպէս ի լեզուագիտութենէ մասին ընտրութեան պէտք են ընդ մատենագիր դրատպեա և ընդ հնաւանակ, ընդ բառս և ընդ ոճս առաջնոց և միջնոց և յետնոց։

Ինքնին իսկ յայտնի լինի ասացեալս և ի վկայութենէ եդելոց առ ընթեր իւրաքանչիւր բառից՝ պիտանեաց և անպիտանից. որք առնուն զյորդ իւրեանց ի մատենագրաց վարդապետաց զայն՝ բազմաց կամ սակաւուց յայլևայլ դարս։ Ցայտնի է և այն, զի Թէ յորդի ինչ է և Թէ անարդ վկայն, յորժամ մի միայն է վկայութենէն՝ նշան է, Թէ

առ այժմ զայն ևեթ վկայութեն գտեալ է մեր. զի թէ գտանէաք այլ ևս, ՚ի վերայ բերեսք ՚ի առուգուեն նոյն բառի պիտանւոյ կամ անպիտան կարծեցեալոյ ։

Հանրական հմտութեք գիտելի է ամենեցուն, զի ընտիր հայկաբանութեն փայլէ յոսկի դարու սքեայ Թարգմանչաց մերոց, որպէս ՚ի շարադրութենէնս նոցա, ըստ նմին և ՚ի գիրս Թարգմանեալս ՚ի նոցանէ ։ Եւ այս իսկ է առանձին պատգև ոյ մերումս աղգի, զի և ոչ գիր է պանչելի Թարգմանութեն նոցա անսխեղծ, քաղցր և առատեալ քաղցր։ Ցեա այնուհետև, այսինքն ՚ի հինգերորդ դարէ մինչև յերկոտասանն, եղեն և ոչ սակաւ հայկաբանք, բայց և ոմանք օտարաբանք. իսկ յերեքտասաներորդէ մինչև յուԹուտաներորդն՝ յոյժ սակաւ եղեն ճշգրիտ հայկաբանք, և յոլովք յաւէտ ոսմկաբանք, և խանգարիչք լեզուիս. մինչև յիս ՚ի լոյս ընծայելոյ առաջին բառարանի սկսաւ կենդանանալ նախկին հայկաբանութէն. զորոյ ընդ բարգաւաճանս ակն ունի տեսանել երկրորդս բառարան. միայն Թէ ոյք վարինն սուաւ, գիտացին ընտրութէն տանել ըստ նախագրեցոյս ։ Զայս ամենայն լաւ ևս իմացիս յաջորդ ցուցակաւս ։

Զ. ՑՈՒՑԱԿ ՄԱՏԵՆԻՑ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ, ԸՍՏ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԵԱՆՑ՝ ԶՈՐ ՎԱՐԵՄՔ ՅԸՆԹԱՑՍ ԳՈՐԾՈՑՍ

Ո՝ ՝ ձծաչունչ Աք գրոց՝ հին և նոր կտակարանաց նշանակս գիրք՝ բառ ՚ի միտ առնու սովորութէ ամենայն ոք. զի յայտնի են՝ Թէ ՚ի գնել մեր Ծն. Եւ. Դտ. Ցէս. ՚՚ Ռփ. ևն. կամ Սղ. Աաի, կամ Ես. Երէմ. ևն. որպէս և Մթև. Մրկ. Հ՚՚. ևն, զոր մասն Աք գրոց սիրէ իմանալ։ Յորում կարգի երբ դտանես եդեալ, Սիրաք. կամ Սէր. իմա անխափ զկրկին օրինակս Թարգմանութենէց. յորոց մին է քաղուածոյ և անշուք ոճով բազպրեալ. զոր կոչենք նոր՝ Թէպէտև ՚ի վաղնջուց այնպէս յարմարեալ. և միւսն և՛ հին և՛ ընտիր՝ հաւանեալ յոյն բնագրի, յեղ տպագրութեան ՚՚ձծաչնչի հասեալ ՚ի մեր ձեռս ։ Ցայսմ տեսանես և զայս իմաստուն ընԹերցօղդ, զի ուր սակաւ ուրեք դտանի բառ ինչ ՚ի Աք գիրս, զբանն ոչնչայն եդաք՝ հանդերձ նշանակօք գլխոյ և համարոյ. իսկ յորժամ յաճախեալ իցէ տեղի նոյն բառ այլևայլ ոճով, առանց այլոյ ծանօթութէ քաղելք զայլևայլ բանս գրոց ։ Մնայ ասել զայլոց մատենից մի առ մի ։

Ալաքէն ըստ նախնեաց՝ նախատպատիս են ՚ի կարգի մատենագրաց ՚ի պէս բառարանի հեղինակք լեզուի հնագոյնք ժամանակաւ. վասն որոյ պէտք էին աստանօր զայնպիսիս նախաչարգել, և ստացչեսինս գարուք և զստուգինս ոճովայլ զի յընԹացս գործոյս խառն նշանակեալ անուանք նոցա գիւրագիւտ լինիցին խնդրելեաց, յայտ վայրի շարադասեմք զնոսա ՚ի կարգ այբուբենի օրինակ զայս ։

Աբր. Ռսէի ։ Աբրահամու մամիկոնէից եպիսկոպոսի յԵլս է գաղրու, պատմութէի Ժողովին եփեսոսի պարզ և վայելուչ հայկաբանութէ. և հատուած բանից նմ ընդ վաչագանայ ալուանից արքայի ։

Ագաթ ։ Այն է Ագաթանգեղոս ատենագպիր սքեայն տրդատայ ՚ի ՚՚ գարու, պատմագան վարուց և գործոց նորին, և առաւել սքեայ հօրն մերոյ գրիգորի լուսաւորչի, քաջածանօթ ազգիս համօրէն, ԱՀող քարաւղար վերադանեալ ՚ի խորենացւոյն և յորոց զինի ։ Բովանդակ գլուխն է վեմ և հարազատ հայկաբան ։ Կայ և արձպատգրութէն գործոյն յայլոց և ՚ի մէնջ ։ Գտանի մեծաւ մասամբ և յունարէն Թարգմանուն յառաջ բերեալ ՚ի Մետափրաստիսէ, և տպագրեալ ՚ի Բոլլանդեան վարս սքեց յն. և լուս Տեսանի ՚ի կանոնագիրս հատուած մի բանից յոլոգս կայենի՝ յանուն ագաթանգեղոսի՝ ոչինչ օտար յոճոյ նորա ։ Տէս զինի և ԹղԹ. գալ ։

ԱԹ. ՚՚. Ք. Գ. ևն ։ Աճապանական ձառք սքեայն աԹանասի՝ ասիք. սանգրու հայրապետի ՚ի ՚՚ գարու, հին և ընտիր Թարգմանութ, որպէս և մատեանն է հին և ճարտար դրչութէ ։ Ոչ պակասին յընԹացս և հելլենական ոճք ։

ԱՒ. անփ ։ Վարք սքեայ Ծօրն մերոյ անտոնի արքայի՝ ըստ հին Թարգմանութէ՝ համառօտեալ ՚ի ձառընտիրս ։

ԱՒ. հՔ. խլ. կոտ. ՚ի սպէէ. ևն ։ ձառ ՚ի համբարձումն քրի կամ ՚ի վերացումն ած և ՚ի խաչն, ՚ի կոյան և ՚ի առեփանոս. Թարգմանութէ մինչև կամ անհարԹ ։ Կայ և հանդամանակ ՚՚ նոր Թարգմանութ ՚ի լատինէ ։

Հց. ասՔ. Ե կի-ղչ ։ Պարզախօս գրուած ինչ ՚ի վերայ պէսպէս խրատց՝ հարցմամբ և պատասխանւով, իբրու ընդ աԹանաս և ընդ կիւրեղ եէմացի ։

Ախտղ. կամ ԱՀՔտղ ։ Անպէտ գրութէ անպիտան ոճով ՚ի վերայ բախտից և վիճակաց ըստ գուշակական առաղաՀմայութէց, տուտ քնախօսութէց, և որոց ՚ի նոցին սակի են ։ Օրինակք այսպիսեացս ոչ երբէք լինին նման միմեանց՝ հանդոյն բանից տուտ վկայից ։

Աչէտս. Տ. Պմ. ոչէտս ։

Անան. էՒէղ ։ Անանիայի վարդապետի նարեկացւոյ՝ հօրեղբօր մերոյ սքեայն գրիգորի նարեկացւոյ, ձառ ՚ի վերայ եկեղեցւոյ՝ պերճ և փառացի ոճով, հանդերձ անտուղոյ բարդութէք բառից, ուղղեալ ընդգեմ Թոնդրակեցւոց ։

Անան. ղՀղ. կամ ֆհ. և ՚ի յհ. Ղ. և ՚ի յոՒ. և ՚ի պէՒղ ։ Անանիայ քահանայի (չերմակացւոյ կարծեցեալ յոմանց) խրատ առ քահանայս, և վասն խոնարհութէ, և յորդորական բան վասն զըղջման և արտասուաց՝ պարզ և վայելուչ ոճով։ Եւ անանիայի ուրուանի վարդապետի բանք ՚ի յովհաննէս մկրտիչ, ՚ի պետրոս առաքեալ, և ՚ի յուխան ևն, լաւ ևս ոճով ։

Անան. ղէր. Տ. Շէր ։

Անան. առնահն. Տ. Սանահնէ

Անդէպոր ։ Անթիպատրոսի բռստրացւոց եպիսկոպոսի քանի մի ձառք Թարգմանեալ միջակ ոճով ՚ի կարգի ձառընտրաց ։ Ալ զայսպիսի մատենագիրս յոլովսկի նշանակեմք ընդ տատիւքս, ՃԿՒ ՃՃ ։

Անյ. կամ ԱնյաղՔ. Բաւէր ։ Սքեայն գաւԹի անյաղԹ փիլիսոփայի հարքացւոյ կամ ներփինացւոյ, յաշակերտութէ սքեց Ժպղտման, ձառ պանծալի և վսեմ ՚ի ՚՚ խաչն, որոյ սկիզբն է Բարձրացուցչէք. ուր կան և հեռք հելլենաբանութէ ։ Տէս և գէՔ ։

Անյ. հղ. ԽՀ ։ Հարցուածոյ սիրատուԹի ընտիր և իմաստասիրական՝ ձչգրիտ հայկաբանութ վսեմագունիւ. որ յաւուրս տպագրութէ գործոյս եհաս ՚ի ձեռս մեր. վասն որոյ ՚ի Խ տառէ և անդր կոչի ՚ի վկայութէն. յաւելցի ընդ ինչ ինչ և ՚ի մեծացորդս ։

Անյ. պօրփ. կամ պՔօրփ. կամ պերէՔմՀ. կամ Վերէ. օրէփ ։ Լուծմունք հինգ ձայնից պօրփիւրի, և ստորոգութէց, և սերբիանենիասի, և վերլուծական գրոց արիստոտէլի, առաւել հելլենաբանութէ և խրԹին ոճով ։ Ի սոսին վերածին և առածք հինգ վասն սահմանի, և բաժանման, և նկատուածն արիստոտէլի ։ Տէս և ՍահՀ. և փէէ ։ Կան և քանի մի գրուածք դաւԹի բազբեանդացւոյ. որում մարԹ է ընծայել և ինչ ինչ ՚ի հատուկտիր բանից՝ որք կրեն ղանուն դաւԹի անյաղԹի ։

Անէ. նշանակս է անընչան առ մեզ, զի այսպէս դնի ՚ի հատուածս բառարանի սահմանոսի լեհացւոյ ։

ԱսՔէԼ պՔմ ։ Վասն քանի մի ևեթ կարևոր Թուեցեալ բառից յառաջ բերեալ զիտելն գարու պատմագրութէի առաքել վարդապետի գտելեժցոյ. զորոյ ղշարադրութէնն Թէ չէր խանգարեալ տպօղն Ոսկան վարդապետս, առաւել գովելի լինէր ։

ԱսՔին. կամ Մ՚՚ ։ Եւ յայս գրոցս Առաքինութէնէ և մոլութէնէ, որ է ՚ի լատինէ Թարգմանութէի յակոբոյ ջահկեցւոյ՝ տանելի ոճով, նշանակեցաք զբաւս ինչ ըստ իմիք պիտանիս ։

Ա՚՚ ործ. ՚՚. Բ. Գ. ևն ։ Գիրք ձառից սքեայն գրիգորի ՃԺ. սքեանի նազիանզացւոյ. ուր քանզի նախկին ձառ դնի ՚ի մեզ այն՝ որոյ սկիզբն է, «Առ որս բանիս են պաճուճեալ՝ բանքս», անուն մատենին կոչի առ Դայս՝ Առ որս գիրք ՃԺ. Ի Թարգմանութէի հին՝ կէս մի հայկաբան, և կէս մի հելլենախօս. Թուղ զսկսեալ վերպակս գըրչաց, որոց չէր ինչ գիւրըմբռնելի ճարտար ճառաբանութէի այնպիսիս Տէս և ԱՀոբ ։

Աոզ. ՚՚. ւ. կի Բ. և Գ ։ Պատմութէ ատեփաննոսի վարդապետի տարոնեցւոյ՝ մականուն Ասողիկ կի Ասոլնիկ ՚ի սկիզբն ժԸ դարու, յերիս բաժանեալ դիպս. միջակ ոճովաւրեք հարթ, ևաւրեք անհարթ ։

ԱՀոբ. ծՆ. հՀփ. պաոե. նոր կիր. պԷՆփէ. խլ. ֆահոբ. կիպր. կոփս. ոչխ. և ծղ. ևն ։ Տօնական ճառք և բեմբասացութէնք գրիգորի ՃԺ. սքեանի, գրեալք ուրուն, կամ սիրեալք ՚ի ձառընտիրս. որպէս ՚ի ծնունդ և ՚ի մկրտութէի տեառն, ՚ի պատեքն կամ ՚ի պասքային, ՚ի նոր կիրակէն, ՚ի սինեոկոստէն, ՚ի խաչն, և ՚ի մեկնաբայեցիս, և ՚ի կիպրիանոս. և յորագս կալուսի, և ապքաստիրութէնէ. որպէս և մեկնութէի ՚ի ժողովոյն, գործ առաջին Թարգմանչաց՝ քաջ հայկաբան՝ խառն ընդ հելլենախօսութէ ։

ԱՀոփխ. ՃՃ. Ֆ. ևն ։ Երիքսաստան Թուղթք սքեայն իգնատիոսի ՃԺ. ղեկաց հայրապետին անտիոքայ, տպագրեալ ՚ի կոստանդինուպոլիս յամի 1783. համեմատու Թեամբ՝ որպէս ասի հին Ձեռագրօք, բայց ուրեք ուրեք այլայլութէք հոլովից և խոնարհմանց բառ յեղանոյն կերպիւ ։ Ի հին Թարգմանութէնն անհնեալ՝ պարզ և ընտիր, հատարակօրէն բառ առ բառ ձայնակից ընտիր օրինակաց յոյն բնագրի ։

Ակէոփակ. Նաոակոփ. կի ՀԸփ ։ Ճառ արիստակէսի սուրբ վարդապետի (եԹէ չիցէ լատինվերացին) ՚ի մկրտութէի տեառն և ՚ի

ընդհանուր ժողովի որոշմամբ, կամ տնօրենների խորհրդի որոշմամբ՝ ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով։ Ընկերության տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին որոշումը կայացնելուց առաջ ընդհանուր ժողովը պետք է ծանոթանա աուդիտորական եզրակացությանը։

Հոդված 15. Ընկերության տարեկան հաշվետվության հրապարակումը

Ընկերության տարեկան հաշվետվությունը հաստատելուց հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում, ընկերությունը պարտավոր է այն հրապարակել իր պաշտոնական կայքէջում կամ տարածել զանգվածային լրատվության միջոցներով։ Հրապարակման ենթակա են նաև աուդիտորական եզրակացությունը և տնօրենների խորհրդի տարեկան զեկույցը։

Հոդված 16. Ընկերության լուծարումը

Ընկերությունը կարող է լուծարվել կամավոր կարգով՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որը պետք է ընդունվի առնվազն երեք քառորդ ձայների մեծամասնությամբ։ Լուծարման դեպքում ընկերության ակտիվները նախ օգտագործվում են պարտքերը մարելու համար, իսկ մնացորդը բաշխվում է բաժնետերերի միջև՝ նրանց սեփականության համամասնությամբ։

Հոդված 17. Վերջնական դրույթներ

Սույն կանոնադրությունը կազմված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնցից մեկը պահվում է ընկերության գրասենյակում, իսկ մյուսը՝ ընկերության գրանցման գործը վարող մարմնում։ Կանոնադրության մեջ կատարված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում միայն այն պետական գրանցումից հետո։

հաշտարծնի 'ի ժԷ գարուս։

կԲր. Է. Խհ. կամ կԲր. էրէ. Խր. և Հ։ կիրակոս վարդապետի երջնկացւոյ կամ արևելցոյ 'ի ժԷ և ժԷ գարուս, պարզ ոճով առումի ուղ խորհրդոց մահուշափ մեղաց՝ ըստ ընթացից նեղոսի և եւագրի. որպէս և ուրոյն բացատրուձի հարիւրեկաց եւագրի, և այլ ձառ խրատական. և յայտուածով։ Սորա է և շարականն Արևելք գերարփին։ Ցմէս և Ցայտնաս։

կԲր. պԽ։ կիրակոս վարդապետի գանձակեցւոյ՝ աշակերտին վանականայ՝ 'ի ժԷ գարուս, պատմուձի ժամանակի իւրոյ, մանաւանդ վասն եղից Թաթարաց՝ ստորին ոճով։

կԲրէտն. առ աԲէ։ Թղթակցուձի 'ի մէջ կիւրիոնի վրաց կաթողիկոսի, և ստրատամոս հայոց կաթողիկոսի։ Թուի լինել հատուածք պատմուձեն ուխտանէսի եպիսկոպոսի, որ գործն չև է 'ի վեր բնեալ։

կԲրէտ. փանյ։ Սձն կիւրղի ալեքսանդրացւոյ՝ գիրք գանձուց՝ զօրաւոր ձեռնարկուձիք ընդդէմ արիանոսաց, եւնոմեանց, և հոգեմարտից. հին Թարգմանուձի ընտիր, այլ օրինակն էր սխալագիր յոյժ, զոր համեմատուձիք յոյն բնագրի եղև մեզ ստուգել 'ի սերգիս սերգիս։

կԲրէտ. հանգ. և ԲղԲ։ Մեկնուձի նիկիական հանգանակի կամ հաւատոյիքի իբրու Թուղթ առ միայնակեացս. Թող զայլ Թուղթս նորա առ զանազանս։

կԲրէտ. ԽոՀ։ Ճառ 'ի վերայ ՀԳյ կուսի ածնեամբ։

կԲրէտ. ծն. էլ. ՀՆ. մինչև ԲԳ. և ճ։ Մեկնուձի ածնաշունչ Հգ դրոց, ընտիր Թարգմանուձիք նախնեաց։

կԲրէտ. չՆ։ Մեկնուձի աւետարանին՝ որ ըստ ղուկասու. օրինակին էր պակասաւոր։ կան և հատուածք զանազան բանից նորա 'ի ձառընտիրս։ ՏԷս և Գրգ։

կԲրէտ. ԷՀՀ. ԲղԲ։ Ընդ Թուղթ սձն կիւրղի երուսաղէմացւոյ առ կոստանդ կայսր վասն երևման խաչի։ ՏԷս և կ-Լ. և ԱԲ. ԼԲրէտ։

կԱխմ. ։ ՑովՀաննու կլիմաքեայ կամ կլիմաքոսի 'ի Ջ գարուս Հգ ձգնաւորի և ապրայի 'ի օրինէական լերին՝ գիրք կրօնաւորական առաքինուձեաց՝ ըստ անուանն իւրում Սանդուխք կոչեցեալ։ Որպէս ոճՁով է պարզ, նոյնպէս և Թարգմանուձին՝ յանյայտ ժամանակի։ ՑԲչին և բանք ինչ նորա յընթացս Հարանց վարուց։

Լկ-Լ. ա. Ի. ևն։ կոչուձն ընծայուձեն սձն կիւրղի երուսաղէմացւոյ՝ հին և ընտիր Թարգմանուձիք նախնեաց։ Ի հին տիպն պակասցուոյ՝ հին և ընտիր Թարգմանուձիք նախնեաց։ Ի հին տիպն վեննայու ոչեր Ճառն ԺԷ, և սկիզբն յաՀղորդին. զոր ընու նոր տիպն վեննայու ըստ ձեռագրաց։

կԲրէտ։ Պատմուձի վարուց սձն մեսրոպայ, և գիւտի գրոց, 'ի կարին անուն աշակերտէ նորա, որ մի էր 'ի գլխաւոր Թարգմանչաց առաջնոց, և կարդեալ եպիսկոպոս 'ի սահմանակցուձեն վրաց և աղուանից, այր աքանչելի կարդացեալ։ ՈձՆ է բուն և հարազատ հայկաբանուձի, ուրիք պարզ, և ուրիք վսեմ. այլ համառօտաս խօսուձին քերէ զմեծուձի. որ և առաւել անհմուտ գրչաց էր ընծայելի, եթէ չէր և փարպեցւոյն վկայեալ Թէ կրկին և կրկին ընդԹերցմամբ լինի իմանալ։ Թող զի խորհրդով իմն պատուաստեալ է դարեանն այլևայլ հատուածս յագաթանգեղոսէ և 'ի բուզանդայ առ 'ի նմանեցուցանել զՁգն մեսրոպ ընդ սձն գրիգորի և ընդ Ցբյն յակովբայ ժԹբնացւոյ։

Հ. և Հ=Ց. Ց. Ցայտնաս։

Համ. առ. կամ յԱչՀ։ Հռամամոյ արևելեան վարդապետի 'ի Ք և Ժ գարուս, մեկնուձի առաւելացն սուղմունք՝ յատակ և ընտիր ոճՁով։ Որպէս և յՍ'վ ես գա գլուխն յովքայ։ կան և քերականական խրԹին բանք նորա այլաբանուձ՝ առեալ յատաջ քերեալք 'ի ընդարձակ քերականուձ երջնկացւոյն։ Գտանի և հատուած չարականի 'ի ձեռագիրս ինչ։

Հայրնախօս, կամ խօսէր։ Գործ նախնեաց՝ որպէս հատուածք հարցիր կամ շարականներ. գտեալ 'ի հին գիրս երդոց։

Հհհ. պԽ։ ՀնԹմոյ իշխանին կոստիկոսայ յԻկս ԺԷ գարուս, կրօնուրիցոյ յարեմտեաս, հատուածք պատմուձի Թաթարաց իւրոյ ժամանակի ստորին ոճՁով, կամ տարիգրուձի 'ի Թուոյն հյ. շիե. մինչև 'ի շիճ։ Գրեալ և նորա և գազիարեն զպատմուձ իւրոյ ժամանակի։

Հհհ. ոփ։ Ոտանաւոր ոտքային հնԹմոյ երկրորդի՝ իբրև յիշատակարան ածնաշնչի գրոցն յԻուր պեաս. ուր ցրի և վիՁՁն ծռազգաւակին։

Հին ֆա։ Հատուածք բառից 'ի գրչագիր հատուածս բառագիրս. գործ ԺԷ և ԺՀ գարուց՝ 'ի գիտնոց և 'ի ոտիտաց կցկցեալ 'ի պեսպես օրինակս այլևայլ օրինակաւ։

Հին ԼԲ. ԽոտԳէ։ ընդարձակ լուծումն գրոց եւագրի 'ի գրիգորէ սկեռացւոյ, ոտքոյն 'ի հատուածս լուծմանց յիտանոց։

Հին ոնէ. Ց. ՎԽէ։

Հց. ոն. կիւրղ. Ց. ԱԲ։

ՂոգաԲ. ֆուգ. Ց. Փուգ։

ՂԼանգ։ Ղևոնդեայ վարդապետի կամ երիցու 'ի Ը գարուս, պատմուձի երկից տաՁկաց, և գործոց նոցա յարևելս մինչև ցԹուականն ՈՂԷ. 788. 'ի խնգրոյ շապհոյ բագրատունւոյ, յատակ և ընտիր հայկաբանուձիք։ Ջմասն մի մատենագրուձեաս ունէաք կանխաւ. այլ լրագոյնն հասաս 'ի մեր ձեռս՝ զկնի ժամանելոյ ոսկագրուձեն բառաբանիս 'ի խ տող։

Ձ. Ա, Բ, Գ, ևն մինչև 'ի ժ. կամ ՁՁ։ Ճառընտիրք ազգի ազգի, ընդունարանք հին Ճառից՝ բնագրաց և Թարգմանելոց 'ի նախնեաց, ոտնականաց իմն, և նեղրագլականաց, ևս և հատուածոց մեկնուձեաց մք գրոց. յորում սակի են և վարք և վկայաբանուձիք սձց ընդարձակք քան զյայտնաւուրացն՝ հատարակօրէն Թարգմանուձիք երանելւոյն գրիգորի վկայասերի որդւոյ մագիստրոսի։ Յերքեմն տան Թուով էին առ մեզ այսպիսի մատեանք. այլ զկնի յաւելան և այլք հետզհետէ. վասն որոյ զոմանս 'ի յետնոցս նշանակեմք ընդ անուամբս Ճ. ժ. և զոմանս ՁՁ. մանաւանդ յորժամ նոյն գրուձի հանդիպի յայլևայլ Ճառընտիրս։ Ոտէպ գնեմք Ճ. Ա, կամ Բ. յորոց առաջինն բոլորագիրն՝ սեծուձիք դրից և բառական հնուձիք է երևելի. բայց սակայն Բ, է հնագոյն, և բազում մասամբ երկաթագիր։ ՑաՁախ ևս գնեմք Ճ. Գ. որ է նոտր դրով գրեալ յերուսաղէմ, լի ոտնական Ճառիւք սձց հարց. զորս երբեմն յանուանէ նշանակեալ է մեր, այլ առաւել յանուն Ճառընտրիս 'ի մէջ բերեալ։ Ցորչափ նոյն Ճառք գտանին յատատնձին մատեանս՝ են առաւել վաւերական՝ հանդերձ անուամբ մատենագրաց. իսկ եթէ անցեալ իցեն և 'ի կարգ Ճառընտրաց՝ ուրիք ըստ բառից, և ուրիք ըստ իմաստից են օրինակեալ։ ՏԷս և Տնախան։

ՃԼ։ Ճաշոց, կամ գիրք Ճաշոյից, այսինքն ընԹերցուածոց պատարագի. ըստ նախնեաց Տնամսոյ կոչեցեալ, այսինքն ընդունակ Տննից Ամին ողջոյն. ուր բաց յընԹերցուածոց կան և աղօթք և Ճառք ոտնականք։ Հատատօտ էր մատեանս յատաջագոյն. այլ յետոյ Ճոխացոյց զայն գրիգոր վկայասէրն հանդերձ գլխաւոր աշակերտաւ իւրով կիրակոսիւ. որպէս տեսանես 'ի յիշատակարանն նորա տպագրեալ 'ի մէնչ 'ի վերջկոյս վերջին հատորոյ վարուց սձց։

Մոփ. ։. Ք. ևն։ Գրիգորի մագիստրոսի փառաւոր իշխանին պահլաւունւոյ՝ հօր գրիգորի վկայասիրի, Թուղթք առ զանազանս՝ խրատ Թէ հայկաբանուձիք և հելլենական հնախօսուձիք՝ հանդերձ անլուր բառիւք, լի իմաստիւք Ճարտարուձեբ։ Ատ յԻ ժԷ Թղթին, որոյ սկզբնատառքն յօգեն, Գրիգոր մագիստրոս, լի են անխմա նախ բառք, զորովք զանց արարուք։

Մոփ. ոփ։ Ոտանաւոր հազար տուն՝ որպէս քաղուած պատմուձ հին և նոր կատակարանաց՝ ըստ առաջարկուձեբ մանուչէի ամիրայի, որ սովին գործով լուսաւորեալ՝ ընդունի զՁգս հաւատս։ Կայ առընԹեր և յիշատակարան կամ պատՁառ յօրինուածոյս՝ նշանակեալ 'ի մատենագրէ անտի։

Մոփ. ԽԼ։ Հատատօտ ոտանաւոր 'ի մք խաչն՝ ուղղեալ առ սիոն րոս կաթողիկոս գեռատարձ՝ հանդերձ ընծայիւ գաւազանի որ 'ի ձև խաչի։

Մոփ. ֆէէ։ Մեկնուձի քերականուձեբ Թրակացւոյն՝ ոչ սակաւ հմտուձիք. զոր քաղէ և երջնկացին բազում մատատ։

Մահ Հպփ. կամ Նահապ։ Հատատօտ պատմուձի կաստրման սձց մարգալիէից կամ Նահապետաց, գտեալ 'ի ձեռագիր ածնաշունչս և 'ի Ճաշոցս։

Մաչփ. աԲէչ։ Մաղաքիոյ աբեղայի յԻկս ԺԷ գարուս, պատմուձ ազգին Նեստորից, ցի գալստեան Թաթարաց 'ի հայս. ստորին ոճով։

ՄոմԲէ։ Երանելւոյն մամբրէի վերծանողի մեծխոստ վարդապետի՝ կրտսեր եղբօր խորենացւոյ, գեղեցիկ Ճառ 'ի յայտուձին զատուրս՝ որպէս մեկնուձի աւետարանին յովՀաննու՝ ընտիր հայկաբանուձիք և Ճարտար յօրինուածով։ կան և երկու Ճառք նորա 'ի գալուստ սեռատն յերուսաղէմ յատուր սրմաւեննեաց՝ Թէպէտ և առաւել բառազարդ։ այլ նուազ վսեմուձ. Թող զայլափոխեալ օրինակ 'ի ածնական մատեանս՝ ըստ հաՃոյս հաւաքողաց 'ի զանազանից։

ՄոմԽ։ պատմուձի տարօնոյ իբրու յատելուած գրոցն զինորայ 'ի յովՀաննէ մամիկոնեան 'ի Ե գարուս, ստորին և անշուք ոճով. ևս և բազում տարբերուձ գրչաց 'ի հին տպագրուձէ և յիրերաց։

Մանդ. ։. Ի. ևն։ Երանելւոյն յովՀաննու մանդակունւոյ՝ աշակերտի սձց Թարգմանչաց, և կաթողիկոսի 'ի Ե գարուս, Ճառք խրատականք՝ յատակ և մաքուր ոճով, 'ի կրկին օրինակս՝ այլևայլ գտեալ խոհարգուձիք. յորոց մին է առաւել հին և ընդարձակ, և միւսն աւելի կարճ և նոր։ Այլ յոլովք 'ի Ճառից ատսի 'ի ճ. դ. և յայլ գիրս գտին յանուն սձն եփրեմի. զոր ժամանակն ատուգեսցէ։ Ցայտնի են և սքանչելի քարոզք և աղօթք մանդակունւոյն 'ի ժամատիրս, և 'ի հին մաշտոցս, որպէս և 'ի պատարագամատոյցի։ Պանծալի է և հատատօտ ատենախօսուձի նորա 'ի վախճան պատ. Փարպեցւոյ։

ՄովՎ։ Գիրք ապօթից զՁգականաց՝ գրիգորի իմաստասէր վարդապետի մաշկուտցւոյ, 'ի մաշկևոր վանուց, պարզ և մատուր ոճով, և ուրիք ուրիք գեղեցիկ ձեռվ ներատգրուձեբ. վասն երբեմն և կՀա-

Ը. յն. ա. և Է. դ. և այլն : Ըղթայ մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց, առեալ 'ի թարգմանութէ նախնեաց, և շարադրեալ և յարմարեալ որպէս երևի, մասամբ 'ի Շնորհալւոյն, և մասամբ 'ի միոյ 'ի յաջորդաց նորա, կամ 'ի գրիգորէ ապիրատայ. զի 'ի վերջաբանս երկին հին օրինակաց եղելոց 'ի մեր ձեռս կան այլևայլ յիշատակարանք՝ երկին կարծեաց նշանակք :

Ը. համառօտ խոսք. 'ի ծն. Աքանչելի աղօթք 'ի Իք տառս, վասն ամենայն հաւատացելոց՝ անցեալ 'ի ժամագիրս, թարգմանեալ 'ի բազում յոյժ լեզուս առ մեօք. կայլն և 'ի նախընթաց դարու թարգմանութիւնք նոյն 'ի քանի մի բարբառս եւրոպիոյ. 'ի ձեռագիրս կայ և յառաջաբան սորին :

Ը. ամենայն չար : Մեկնութիւն պխտառութեան որ սկսանի «Ամենայն չար առնջելիս». և կայ 'ի գործս Նիւսացւոյն, և անյայտ է :

Ը. հրեշտ. և տպ. հրեշտ: Արձակ ներբող հրեշտակաց՝ քաղուածով իմաստից և ոճոյ դիոնեսիոսի. և ոտանաւոր մաղթողական առ սէ հրեշտակս :

Ը. բարձր. և տպ. բարձր: Մեկնութիւն Բարձրացուցէքի Ճառիրսութի անյաղթին 'ի սէ խաչն, հանդերձ ոտանաւոր յօրինուածով նոյն իմաստից :

Ը. ճ. տոհմ : Չափաբերական գիրք ոտանաւորաց՝ մաղթողական ձևով և գեղեցիկ քաղուածով հին և նոր կտակարանաց, առեալ զանուն ասփորական 'ի սկզբնաւորութէ առաւ, «Յիսուս որդի հօր միածին» : Յորում բովանդակին հատարակօրէն բառ հին ընտիր գրչաց և առաջինկայ ոտանաւորք :

Ը. խոստովան: Բան հաւատոյ, որ սկսանի, «Խոստովանիմ ած ըզհայր» :

Ը. ողբերգ: Այլևայլ ոտանաւորք 'ի վերայ աղբաբեննից 'ի խրատ մանկանց :

Ը. ին եղով: Ոտանաւոր յաղագս զարդուց երկնից, սկսեալ 'ի գիմաց նորա, «Իմ եղական գոլով բնութեն և սկզբնականն» :

Ը. մխիթ. և մխ. էէդ: Ոտանաւոր թուղթ մխիթարութեան առ Մխիթար (որպէս կարծի) վասն վաղամեռիկ զաւակին. և այլ բան խորհրդաւոր, որոյ սկզբնատառքն են. «Մխիթար բժիշկ ընկալ 'ի ներսէսէ զայս բան» :

Ը. առ ապիրատ: Ոտանաւոր թուղթ առ Ապիրատ եղբօրորդի իւր, որ և յետոյ ուրեմն եղև կաթողիկոս. այն է գրիգոր ապիրատն :

Ը. յիշ. առք. կամ առ: Ոտանաւոր յիշատակարան ինքնագիր օրինակի առակացն սողոմոնի :

Ը. եդես: Ոտանաւոր պատմութե առմանն եդեսիոյ յայլազգեաց՝ 'ի խնդրոյ ապիրատայ :

Ը. գնդ. և տաղ: Քանի մի գանձք, և բազում տաղք գեղեցիկք. յորոց զոմանս ասեալ էր մեր, այլ յետոյ յաւելան և այլ ոչ սակաւք նորագիւտ :

Ը. վիպ: Ոտանաւոր վիպասանութեան նախնեաց յօրինեալ 'ի պատանեկութե :

Ը. առակ: Հանելուկք կամ բոխանք զուարճալի իմաստիւք՝ 'ի ռամկական լեզու ժամանակին՝ 'ի հասուն հասակի :

Ըողհ. բժշ: Հատուած 'ի պատմութէ Ըապհոյ բագրատունեաց. այլ բուն գործ նորա յիշատակեալ 'ի Ցհ. կբ. չև ևս երևեցաւ յագգին :

Ըար: Ըարական՝ որ է երգարան սքանչելի, 'ի յոլովից քերթողաց ազգիս յօրինեալ. որոց անուանք բազում մասամբ են յայտնի. և առաւել նշանաւորք 'ի նոսա Ճանաչին մովսէս քերթող խորենացի, և ներսէս շնորհալի՝ հոգելից բանաստեղծք :

Ըիր: Անանիայ վարդապետի շիրակացւոյ կամ շիրակունւոյ կմ շիրակայնոյ համարողի՝ յԱնի քաղաքէ 'ի է դարու, գիրք աստեղաբաշխութէ, հայկաբան և Ճարտար, քաղելով և բազում ինչ 'ի վեցօրէից բարսղի նովին բառիւք : Զկնի ավելուակաց կան և քանի մի հատուածք բանից դժուարիմաց մասք, որ մարթի լինել յաւելուած այլոյ ուրուք իմաստակի :

Ըիր. եղբ. և ըստ: Համառօտ տեղեկութիւն վասն կշռոց և չափուց ազգաց : Ուր յայլևայլ օրինակս գտանին և յաւելուածք 'ի յետնոց :

Ըիր. վասն յենոց խոցոց: Պատմութիւն զանձնէ վասն ջանից ուսումնասիրութե իւրոյ՝ մանաւանդ 'ի թուաբանական և յաստեղաբաշխական մասին :

Ըիր. յոյսոն: Բան վասն տօնի յայտնութե :

Ըիր. զատ: Բան վասն տօնի զատկին՝ ատմարական հետազօտութբ : Իսկ բուն ատմարական քննութիւն իւր՝ ըստ վկայելոյ իւրոյ՝ ոչ հանդիպացաւ կամ չեղաւ 'ի գործ յագգին :

Ըիր. քրոն: Քրոնիկոն կամ ժամանակագրութիւն՝ քաղեալ 'ի նախնեաց, մանաւանդ յեւսեբեայ և 'ի խորենացւոյն և այլն, և հասուցեալ ցաւուրս իւր, եթէ չկայցեն և ինչ ինչ պատուաստեալ յայլոց. զի է գործ խառնակ յոյժ ըստ բազում գլխոց, և խառն յառաստելոց աւուրց : Երկոքին այս յետին գործք հասին 'ի մեր ձեռս յաւուրս տպագրութե իս առաւի :

